

մեծասրանչ.... և նշանակերտ գեղօք,,,:  
զարդարեալ է,,,:  
Ուզգ. եւ կրկնուած է “ այսուհետեւ, ի  
և էն. “ դեղօք,,. որպէս թէ ի գեղագործ  
պատկերի:

Էջ 108. տող 15 “ Եւ որչափ երեւի  
տկար մարմնով քան զնոսա եւ ուժով,,,:  
Ուզգ. “ Նուազ կամ պակաս ուժով,,,:  
Էջ 108. տող 20. “ Արդ՝ եթէ ի սոյն  
յինցորդ և ի նոսին թեւակոյինցորդ զան-  
ձինս մեր, կարեմք իմանալ զԱստուած և  
ճանաչել,,:

Ուզգ. Խորհնուցուք. մտածեով և խոր-  
հելով կարելի է իմանալ և ճանաչել զԱս-  
տուած:

Էջ 111. տող 6. “ Բայց նախ զայս  
գիտացուք, իթէ ամենայն իրը՝ որ յօղեալը  
են, զատ և որի: ի միմեանց բնութեամբըն  
իրեանց,,:

Ուզգ. “ Որիշ են ի միմեանց,,:

Էջ 115. տող 8. “ Զի յորժամ ընդ  
ծագել արեգականն թագոյն ելանիցէ, և  
արեան և կայծական նշանակ ունիցի ձա-  
սագյթիւր ըստ փոփոխմանց խստաշունչ  
օդոցն,,:

Ուզգ. “ զաւագայրիք,,:

Էջ 115. տող 17 “ Եւ յորժամ շուրջ  
բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի  
մոայլ զարեգակն ամպոց՝ ջուրը բազումը  
յօդոց յերկիր առարին, կամ զարամուր  
փրոց և զառնաշունչ բըոց ամրոխելոց  
յայտ առնեն,,. Ուզգ. “ և ունիցի մոայլ  
արեգակն (‘ զ., առնուած է “ մոայլ,, ի  
և էն, ամպոցն կրկնութիւն նախընթացին)  
... (‘ փրոց,, որ Կը կրկնուի. ջնջելու է)  
և զառնաշունչ բըոց,,:

Բայս այսմ կ'ունենանց պարբերութիւնն  
այս ձեւով. “ Եւ յորժամ շուրջ բակ ու-  
նիցի լուսինն ամպոց, և ունիցի մոայլ ա-  
րեգակն, ջուրը բազումը յօդոց յերկիր  
առարին, կամ զարամուր և զառնաշունչ  
բըոց ամրոխելոց յայտ առնեն,,:

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կարայարելի

## ԴԱՏԱԿԱՄԱՆ Ք.

### ՄԱՐՏԻՆՈՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ժ. - Գարրիկ Շաշարեան Հայեցի:

Այ ծնաւ Հալէպ յամին 1811. աշակեր-  
տութիւնն ըրաւ Զմմառու վանցն և եղաւ  
միաբան նոյն վանաց: Գրիգոր Փետրոս Բ.  
պատրիարք Տան կիլիկիոյ՝ ընտրեց և հա-  
տաեց 12 մայիս 1856. Արքակիսկոպոս  
Մարտինոյ. և նոյն տարին 13 մայիս  
ձեռնազբեցաւ նոյն Հայրապետէն ի Զմմառ  
մեծահանդէս շըով: Իր վիճակն երթացն  
ետեւ՝ հաւասարութեամբ և ձեռնտուութեամբ  
նոյն Պատրիարքին ըրաւ ինչ ինչ բարե-  
կարութիւններ, նաեւ բաւական նորոգու-  
թիւններ: Եօթը տարի և ութ ամիս վա-  
րեց իր նուիրական պաշտօնն և հանգեաւ  
ի Տէր 1 յունուար 1863 և թաղեցաւ իր  
նախորդաց շիրիմներուն մէջ:

ԺԱ. - Մելիքն Գ. Նազարեան Մարտինոյի:

Մնեալ ի Մարտին 8 հոկտ. 1830, ա-  
շակերտեցաւ ի վանս Զմմառի վեց տարի,  
և ետքէն առարեցաւ Հռովմ Աւրքանեան  
դպրոց. ընտրեցաւ արքակիսկոպոս Մար-  
տինոյ Գրիգոր Փետրոս Բ. պատրիարքէ  
Տան կիլիկիոյ, որ և հաստաեց զինքը  
30 զեկտ. 1863ին. իսկ ձեռնազբութիւնը  
կատարեցաւ նոյն Հայրապետէն ի Զմմառ  
5 մայիս 1864: Դարձաւ իր վիճակն և  
կառոյց նոր եկեղեցի մը յանուն Ա. Յով-  
սիփայ Աստուածածոր: Վարեց իր պաշտօ-  
նը երեսուն և վեց տարի: Ժամանակ մը ե-  
ղաւ նաեւ Առարելական պատրիարքական  
փոխանորդ ի պարապութեան աթոռոյ,  
Գրիգոր Փետրոս Բ. պատրիարքին մա-  
հուանէն ետեւ: Հանգեաւ ի Տէր ի Մար-  
տին 11 նոյեմբ. 1900 և թաղեցաւ իր  
նախորդաց շիրիմին մէջ:

ԺԲ. Յուսիկ Կիշևան Մարտինցի:

Դնումն եղաւ ի Մարտին 2 մարտ 1844: Աշակերտեցաւ ի վանս Զմմառի, և եղաւ միարան նոյն վանաց. ընտրեցաւ ի Պօլոս Պետրոս ԺՈ. պատրիարքէ Աթինհուդուու վիճակակից եպիսկոպոսաց: Հաստատեց զինքը Առաքելական Աթոռու. ձեռնադրեցաւ և կարգեցաւ արքեպիսկոպոս Մարտինոյ նոյն Հայրապետէն 9 յուն. 1902 որ և կը վարէ իր վիճակը մինչեւ ցայսօր:

Մարտինոյ Արքեպիսկոպոսները՝ Մելգոն Թասպասիանէ սկիսալ՝ Կընտրուէին և կը հաստատուէին Առաքելական Աթոռուն Հռովմայ, և կը ձեռնադրուէին անոր հրամանաւ՝ Հայ ծիսի կաթողիկեայ առաջնորդներէն՝ ինչպէս ինքն Մելգոն: Մարտինու եպիսկոպոս էր Ամրայ, և ապա Ա. Աթոռուն հաստատեցաւ արքեպիսկոպոս Մարտինոյ: Մելգոն Մարգար ճշդիւ իւր առաջին նախորդին աչս ընտրեցաւ և հաստատեցաւ. նա գոնուեցաւ Հալէս Ա. Աստուածածին եկեղեցին գումարուած ժողովին մէջ յամին 1740 յորում Յակոբ Հալէսի Մելգոն Մարգար Մարտինոյ և Սահակ Քիլսի առաջնորդ՝ միարանց ընդ երիցանց, կղերիկոսաց և ժողովրդեան ընտրեցին պատրիարք ազգին իւրեանց զԱրքահամ կարգապետ արքեպիսկոպոս: Ասոնց խորհրդական ատենին խօսքերն են. դարձեալ կը յաւելու նոյնը. « Այս այս (Արքահամ) . . . կարգեցի այժմ վարիչ պատրիարքական եկեղեցւոյն գրելոյ ի վեր, որոց ընդ իշխանութեամբ են երեք եպիսկոպոս, որը յայտնի և համարձակ դաւանին գուղղի հաւատու»: և այս երեք եպիսկոպոսներն են Յակոբ, Մելգոն և Սահակ: Եւ երբ յետ ժամանակի դժուար բութիւններ ելան իրաւաբանական՝ Մելգոն Մարգար եպիսկոպոսին և Արքահամ Պատրիարքին մէջ, Ա. Աթոռը հաստատեց սորա իրաւունքը Մարտինոյ Աթոռոյն վըրայ, և այնուշետե չեղաւ գուարութիւն: Խոկ Մարտինոյ արքեպիսկոպոսին ընտրութիւնն և հաստատութիւնը կ'ըլլար:

ուաջուան պէս Հռովմէն և ձեռնադրութիւնը կիլիկիոյ պատրիարքէն: Բայց երբ Ծովակիմ Արքեպիսկոպոս Թասպաս՝ ինքնազուլս իրեն օգնական եպիսկոպոս ձեռնադրեց Տոլբայի տիտղոսով Ալաշկերտցի Բարաղամ վարդապետը, Դրիգոր Պետրոս Զ. պատրիարքը չհաճեցաւ: Բանակցութիւններ եղան և Ա. Աթոռը Առաքելական հաստատեց Բարաղամը՝ անուամբ Արքեպիսկոպոսի ծրբափոսի իրեմիոյ և իրաւում յաջորդութեան Աթոռոյն Մարտինոյ: Յովակիմ Արքեպիսկոպոսի մահուանէ ետեւ յամին 1836 նստաւ Բարաղամ նոյն Աթոռոք բայց ծերացած ըլլալով երկու տարին չըկատարած պէտք ունեցաւ օգնականի, զոր տուաւ իրեն Ա. Փողովը 29 յունու. 1838 բարեհաճառութեամբ Ա. Քահանայապետին, որ յամննեց պատրիարքէն կիլիկիոյ անոր ընտրութիւնը. Գրիգոր Պետրոս Զ. ընտրեց զՊովսէփ վարդապետ Ֆարբայեան միարան Զմմառի, տուաւ հաստատութիւնն և ձեռնադրեց նոյն տարին 15 Յուլիս: Պընաց նորդնծայ եպիսկոպոսն ի Մարտին և ցանի մի ամիս կերջ մեռաւ Բարաղամ արքեպիսկոպոս 28 դեկտ. 1838:

Ոյնուշետե Մարտինոյ Արքեպիսկոպոսաց ընտրութիւնն, հաստատութիւնը և ձեռնադրութիւնը թաց պատրիարքին կիլիկիոյ. զի յետ Յովսէփ Ֆարբայ արքեպիսկոպոսի նոյն կերպով կարգեցան Գարբիէլ Շաշաթեան և Մելգոն Նազարեան արքեպիսկոպոսունց:

Ակա նոր կարգադրութեամբ ընտրութիւնը կը պատկանի եպիսկոպոսաց, պատրիարքական սինհոգոսին հաստատութիւնը՝ Ա. Աթոռին, իսկ կարգումը և ձեռնադրութիւնը պատրիարքին կիլիկիոյ, որ և արդ հասարակ է ամեն թեմերու համար, և նոյն է այժմու կանոնական կարգը: Կայ նաեւ յառաջ և զկնի կիլիկի և ժողովրդեան բարի վկայութիւնը ցանի մը ընտրելի անձանց վրայ:

Մարտինի կաթողիկեայ հայոց թեմն անձուկ էր առաջ, և նոյն նահանգէն դուրս՝ շատ քիչ տեղ կը բովանդակէր իր մէջ. վերջէն առաւել եւս ընդարձակեցաւ, զի

արդ կը պատկանի իրեն Մարտինի սան-  
ճագն ամրողջ, Տէյր-Էլ-Զօր սանճազին  
Եփրատայ արեւելեան կողմը զոնուող ռո-  
ւոր քաղաքները, Մուսուլի Վիլայէթը :  
Խակ Պաղտատիր և Պարայի Գաւառները՝  
մինչեւ ցնոր կարգադրութիւն կը տնօրի-  
նուին պատրիարքական Գործակալու-  
թեամբ, թէ և ասոնք եւս սահմանուած են  
Թալ մասն վիճակին Մարտինոյ:

Մարտին չունի կղերանոց սեպհական,  
կոչում ունեցող ընդհանրապէս Զմմառ  
Կ'երթան. բայց նաեւ Մարտինոյ մէջ ա-  
ռանձնական կրթութեամբ քահանայութեան  
համուզներ կան:

Ինչպէս տեսանք, հայ կաթողիկեայց ու-  
նին Մարտինոյ մէջ երկու եկեղեցի՝ մին  
Ա. Ֆէորգ աթոռանիստ որ առաջ Կ'ա-  
ռուանուէլ Ա. Գրիգոր Լուսաւորիչ. երկ-  
րորդ Ա. Յովսէփ Աստուածահայր նորա-  
շէն:

Մարտինէն վերջ Հայ կաթողիկեայց նը-  
շանաւոր տեղն է Թէէքմէն մեծ գիւղն,  
որոյ բնակիչը առ հասարակ հայ կաթո-  
ղիկեայ են, կրօնասէր և չարբաշ անձինց.  
ոնին եկեղեցի Ա. Ֆէորգ որ ուխտատեղի  
է Այս գիւղը չորս ժամ հեռու է Մար-  
տինէն զէպ հարաւ:

Մարտին քաղաքը շնուած է Մասիս լե-  
ռանց մէկ գլխաւոր զառիվայրին վրայ՝  
ամփիթատրոնի ձեռվ, տնելը մէկ մէկու  
վրայ շինուած են աստիճանածեւ, կը սկսի  
ընդարձակ դաշտին սկիզբէն և կ'ելլէ լեռն  
ի վեր զէպ ի գագաթն, ուր հայ ամրոցը՝  
հինաւուրց հզըր զիրքէրէն մին, որ կը ըըր-  
ջապատէ լերան զլուխը. ժամանակին հըռ-  
չակուած էր իրը անառիկ: Պաղաքն եւս  
ունի շրջապատ պարիսպ լերան ստորոտն,  
որ արդ աւերած է տեղ տեղ:

Մարտինի մօտ է Ա. Վառվառայի ա-  
ւերակ վանքը, և զէպ հիւսիս լեռներու  
վրայ Միսրի գիւղին բով կայ տեղ մը որ  
կ'անուանի Ցեառն տէրէ, յորում կը զըտ-  
նուի աւերակ վանք մը Ա. Յովսէանէս.  
այս երկու վանքերու մէջ հայ կաթողի-  
կեայ քահանայց կը պատարազեն մերթ  
բնդ մերթ:

Քաղաքին առջեւ բաց ի Թէլէրմէնէ  
կան ուրիշ քանի մի ասորի գիւղեր, ինչ-  
պէ Տէր-Զաֆարան, աթոռ պատրիարքին  
Ասորուց Յակորիկեանց, կեօլիիկ, Աքրա-  
համիկ Մ'ենուրիկ, Գարդղմար և Պրեկպի.  
որոնց մէջ կան իրը 500 տուն Յակորիկ,  
120 տուն կաթողիկեայ, և 40 տուն բո-  
ղոքական. ընդհանրապէս ասորի են:

Հարաւայրին արեւելեան կողմը կը գըտ-  
նուի Մ'ծրին (Նուսէպին) Գաղան, յառա-  
ջագոյն գաւառին մեծ քաղաքն էր Մ'ծրին.  
իսկ այժմ աւան է գաւառակին: Հոս փայ-  
լեցաւ Ա. Յակոր Եպիսկոպոս քաղաքին,  
մեծանուշակ վարդապէտ և պարծանց մի-  
ջագետաց: Այս քաղաքը թէեւ աթոռ է  
Գայմազամի, բայց չունի իր նախկին պայ-  
ծառութիւնը:

Դարա, նոյն գաւառակին մէջ, Մարտի-  
նի հարաւայրին արեւելեան կողմը Խապուրի  
վտակց միոյն վրայ կառուցուած. հին  
ժամանակ երեւելի քաղաք էր, որուն  
շուրջը նշանաւոր դէպգեր անցան և ծանր  
պատերազմներ մղուեցան Մ'եծին Յուստի-  
նիանոսի և անոր յաջորդաց Յուստինեայ  
և Տիրերի ժամանակ: Պարսից Խոսրով  
թագաւորը պաշարեց զայն Հերակլի իշխա-  
նութեան միջոցին. տարի և կէս տեւեց  
պաշարումը և հուսկ ապա ապն Պարսիկը  
քաղաքն, և խոսրով այնչափ երկայն գի-  
մակալութեան համար սաստիկ զայրանա-  
լով՝ սրակուոր ըրաւ բնակիչները, կործա-  
նեց պարիսպը և հիմն ի վեր տապալեց  
ամրութիւնները: Այնուհետև անշրջացաւ  
այս հոյակապ քաղաքը, բայց մինչեւ հի-  
մայ անոր աւերակաց մէջ կան մեծաշէն  
եկեղեցեաց աւերակներ, արձանազրու-  
թիւնց, կիսաւեր քարափոր շէնքեր են: Ա-  
յս գիւղացած տեղոյն մէջ կը բնակէին  
իրը 200 Հայք, որոնց միացան ընդ կա-  
թողիկէ եկեղեցւոյ յամին 1856. Մար-  
տինոյ արքեպիսկոպոսին իշխանութեան  
ներքեւ՝ որ կը իննամէ իրենց հոգեւորա-  
կան պիտոյցը քահանաներ առաջելով նաև  
աննոց, որ Մ'ծրին կը գտնուին:

Ճէզիրէ քաղաքաւանն արեւելեան կողմ  
է, Տիգրիսի արեւմտեան եզերը, որ կը

Մապատճեն զայն գրեթէ շուրջանակի: Հին առեն կը կոչուէք Զապոտ կամ Պէզապատա, կորդուաց Եարնէն թագաւորին աթոռը՝ զոր պահնեց Տիգրան, զի դաշնակցութիւն զրած էր Լուկուլսուի հաւ:

Ճէզիրայի և Մարտինոյ միջոցը կը գրտնուին Թուր Ապէտին լեռները. որ կը կոչուի եւս ձէվէլ թոր. այս զաւորին աւանն է Միտեաթ՝ Մարտինի արեւելեան կողմը. բազմաթիւ են ասորի Յակորիկը, որը ունին երեց եպիսկոպոսարքն՝ Միտիաթ, Աէւլին և Մար-Մէլքէ: Սակաւաթիւ են կաթողիկեայց՝ ի մասնաւորի Միտիաթ, ուր կը զտնուին նաեւ քանի մի Հայք, որ Մարտինէն զաղթած են:

Մարտին բաղացին հիւսիսային արեւելեան կողմը կը գտնուի Սաուր զաւորակը, յորում Քրդաց երկու հարիւր գիշերու կարգը կը յիշուին Սաուր աւան, Բերան, Զուենի, Քիլան, Աղ-րէկէ, Քրդ-Տէրկէ, Քրիար-Շատազի, Ամոսու, Խաւանար, Խաեհ-Քևօյ, Ցէկէյի և այլն, որոնց մէջ քանի մը Հարիւր տուն հայ կայ. իսկ կաթողիկեայց սակաւ են և ցրտեալ:

Տէրիկ բաղաց կը գտնուի դէպ արեւմտահան հիւսիս, ուր կը բնակին Քուրդը և Հայք, զիմսաւոր աւաննին մէջ կան եւս կաթողիկեաց հայց քանի մի Հարիւր անձինց, որոնց ունին եկեղեցի Ա. Աստուածածին. ժողովրդագետը կու գայ Մարտինէն, և կը փոխուի ամեն երեց տարին անզամը:

Հարաւային արեւմտեան կողմը կայ Վէրան-Շէկը (Կոստանդիա կամ Վաղնտիա) և Բաս-Հէլ-այն (Թէսինա կամ Թէնուուպօլիս) երկուցին մէջ եւս կը գտնուին հայ կաթողիկեաք: Վէրան շէհիր կայ ժողովրդագետ, որ Մարտինէն կ'առաջուի: Այս երկու բաղացներ Խաւուրի վրայ են և կը ծագին հետզհետէ:

Նոյն գետն ի վար միշեալ բաղացաց հարաւակողմը կը գտնուի Թէհ-կաւուրան, որ Վարդանայ աշխարհագութեան մէջ կը գրուի «Աւարդ՝ Թէկուրան»: 1136ին կ'իշեէր այստեղ Առիւծ անունով բարեպաշտ իշխան մը: Թէկուրանցի էր նաեւ

Յովհաննէս Ժ. կաթողիկոս Սսոյ, որ նըստա 36 տարի [1489-1524]:

Մարտինի աթոռոյն կը պատկանի նաև Մուսուլ, հին Նիւռուէ, ուր կը գտնուին մէկ երկու հարիւր տուն հայց, որն ու ունին նորացէն եկեղեցի:

Պատառատի և Պասրայի նկատմամբ հարկ չէ այժմ խօսիլ, քանի որ տակաւին չեն յանձնուած Մարտինի:

Վերը նշանակուած երեց զիմսաւոր ժողովուրդներէն զատ՝ կան նաեւ Քաղղէացից և Լատինը սակաւ թուով, որոնք ունին իրենց վրայ առաջնորդ և վերակացու:

Լուսաւորչականց Մարտինոյ զաւորն մէջ չունին առանձին առաջնորդ, այլ մեծաւ մասսամբ կը վերաբերին Տիգրաբէրիի, մաս մը Պիթթիզի, և հարաւակոյմերը Ռւուրֆայի: Խակ Պատառատ ուրոյն առաջնորդութիւն է Պասրայի, Խուռանյի, Քերցուցի, և 3-400 անձ կաթողիկեայ են, ասոնց ևս ունին եկեղեցի յանուն վերափոխման Ս. Աստուածածին:

Խնչէս ըսինք, Մարտինոյ պատմական գաւուր հին ատենը կը գոչուէք Միկոտանիա, և կը պարունակէր իր մէջը նաեւ Արդարենաց երկուին մէկ մասը: Մարտին կամ Մարտէ բաղացը կառուցեր է Պարթևաց Արշակ Ե. թագաւորը Մասիս (Ճիւտէ) լերանց մէկ նշանանաւոր բարձունքն զառէն: և Մարտին անուանեցաւ այս բաղացն, որովհետեւ Արշակ հոն բնակեցուց Մարտէ անուամբ ժողովուրդ մը, նոյն կողմերէն: Այս ազգէն սերած են Եզիտիք, որ կը բնակին Մասիս լերանց վրայ, եւս և Եչմակիները: Կ'ըսուի՛ որ մաս մ'եւս զնացած կամ տարուած են Լիբանան, որ եղած է վեցերորդ զարոն վերջերը կամ եօթներորդ զարոն սկիզբները: և Պարսից թագաւորներն են զիրենք հոն բերողները, որ նուածեն Լիբանանու լեռնորդիները: Նոյն թագաւորներէն խորով անուանելու է խորովիա Լիբանանու հիւսիսային մասը, որ շատ աւելի ընդարձակ էր հիմակուան Վէսրուանէն: Մարտէները բաւական զօրացան նոյն կողմերը որդուց յորդի: բայց ետքէն կայ-

սերք յունաց հանեցին Լիբանանէն, Դամասկոսի Ալբար խալիֆայից հետ կոռուած դաշանց համեմատ և փոխադրեցին ի Տրաքիա կամ ի Կիլիկիա Տրաքեան, և թացին ժամանակ մը նոյն կողմերը:

Մարտինի քաղաքն և գաւառը կը բնակին հիմա Արևնի մահմէտականը, նաեւ քրիստոնեայց՝ Հայք, Ասորից և Քաղզէացից. կան եւս Շէմսի, Կէպրի և Եզիտի տեղերը, որ կ'երկրպագեն արեւու, հրոյ և դիւի:

Մետասաներորդ դարուն սկիզբէն տիրեցին այս երկիրներուն Պէնի Մ'ըրուան անուանեալ քնորդ իշխանը՝ ուլտուն տարի՝ (1001—1085) վեց պետաց յաջորդութեամբ:

Պէնի Որդոց թիւրքմէն ժամանակ մ'Երուասաղէմ թագաւորելին ետքը, երբ քաթմայեան ըսուած Եղիպտոսի ամիրայց գրաւեցին նոյն պետութիւնը՝ Պէնի Որդոցները ընկրկեցան Միջագետք. և վանելով Պէնի Մ'ըրուանները իրենց տիրեցին Տիկրապէրի և Մարտինի յամին 1087. և իրենց իշխանութիւնը տեսեց մինչև 1408, և նոյն տոհմէն յաջորդեցին քանն և չորս պետք. Այս իշխանաց հզօրագոյնն էր Իշ-Ղազի, որ կը կոչուէր իշխան Մարտինոյ, Աս յամին 1118 առաւ Հալէպ քաղաքն և իշխեց ցամե 1122:

Յամին 1390 առաւ Լէնկ-թիմուր երկայն և սաստիկ պաշարմամբ Մարտին քաղաքը. ժամանակ մը իր գաւառապետներն իշխեցին, բայց երկան չտեսեց թիմուրանց տիրապետութիւնը, զի Ազ-Գոյանլու թիւրքմէն տոհմին պետը Օսման 1411 ին տէր եղած էր Տիկրապէրի և Ալրոնյ. 1418ին առաւ նաեւ Երզնկան, և տարածեց իր պետութիւնը մինչև Պօնտոսու. Առաւ ապա Մարտինն և իր Զամդարդին կուսակալ դրաւ հոն, որ ապա յաջորդեց հօրը:

Շահ Խամայէլ որդի Շէյխ Հայտարայ որդուոյ Շէյխ Ալէյփայ զրաւեց այս երկիրները 1502ին, շատ մը իշխեցողներ հոգաթաւալ զլորելով:

Բայց իրմէ հզօրագոյն Սուլդան Սէլիմ

մշտայաղթ ինքնակալն Օսմանեան՝ Զալտրանու շքեղ յաղթութեամբն առաւ Ամդայ և Մարտինի գաւառներն և ուրիշ շատ տեղեր:

Ա. Վ. Աշխատանքնեան

### Լ Ե Ր Ա Բ Ա Ր Տ Ի

ԳԵՂԱՑԻ ԿԵՐՈ ՄԸ ԿԵՆԿԱՆԱ-

ԳՐԻՆ ՎՐԱՅՑ ՔԱՆԴԱԿԱՆԱԾ

ՆՈՑԻՆ ԳԵՐԵԶԱԿԱԿԱՆ ՑԻՑԱԿԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ

ԱՇԴՎԱԿ էիր. արդ գետնին

Տակ հոս փոշի՝ ես, կը մախի:

Աւշըներուն, արդմին քայ

Աշշարծոքն զետեղուած:

Լուս ու մանչ, զէտ ժամանակի թըուանքին,

Ցիշասակի լոկ և տափ պահապաւ:

Պատկերն անցնաւ զետեղուանքին՝ կեցած է:

Այս անուշիք նայուածին որ դոդ պատճանեց

Երը՝ ինչպէս արդ կը թեփ՝ պէտ անցըթիթ

Արդիշ վրայ յանցաւ:

Այս սրբուն որմէ կարծն՝ զերդ լի սափորէ:

Հեշտանուն զուրս կը գեղու,

Այս պարանոցը՝ երբեմ:

Ըզմաներուն պաշարուած:

Այս սրբակաթ ձեռքն՝ զերծ ամրաց,

Երան երբեմն. արդ ափը, ուկր ես. կը ծածէտ

Քակասագիրն այս վիճակին կ'ենթառէ:

Ո և է զէմ որ երեւաւ մեր միջն:

Կեղանապէտ նըմանութիւն երկնքին:

Ցաէքսուակն խոր ինքնուրդ մէր էւլիւան:

Այսօր ազիւր նըմատում

Բարձր, անսահման ժամանակներու, յոյզերու,

Կը զշշոյէ զետեղուանքին, ու կարծեն՝

Երը նըրոյլ մ՛՝ արձակուած

Անմահան ընութինէ

Այս աւազին վրայ՝ կը տայ

Մահանացու վիճակին

Կըշան և յոյս ապահով

Գերմարդկային բախտերու,

Բարենսին թագերու,

Ես ուկեցն աշխարհներու. վաղն ուկին

Մէկ զօրութեամբ կը գառնայ

Զաղաթորդի, զարշատենել նողկալ

Այս որ եղաւ գէլ առաջ

Հըեշտակային դէմ մը զրեթէ, և իրեն